2024-2025 ուս. տարվա Հանրային առողջության «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագրի շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ հարցումների արդյունքների ամփոփում

ԵՊԲՀ Կրթության որակի գնահատման
և ապահովման կենտրոն

Հարցման մասնակցություն՝ 25 շրջանավարտ (83%)

Սույն վերլուծությունը ներկայացնում է 2024–2025 ուսումնական տարվա Հանրային առողջության «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ իրականացված հարցման արդյունքները: Հարցմանը մասնակցել է 25 շրջանավարտ, ինչը կազմում է ընդհանուր շրջանավարտների 83%-ը և ապահովում է ստացված տվյալների բավարար ներկայացուցչականություն:

Վերլուծության նպատակն է գնահատել ավարտական ատեստավորման գործընթացի կազմակերպման արդյունավետությունը, ուսանողների բավարարվածությունը ուսումնառության ընթացքում ստացված տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով, ինչպես նաև պարզել կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը: Միաժամանակ, վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել կրթական գործընթացի ուժեղ կողմերը և բարելավման կարիք ունեցող ոլորտները՝ հիմնվելով շրջանավարտների կարծիքների և առաջարկությունների վրա:


Հատուկ ուշադրություն է դարձվում ավարտական թեզի պատրաստման և պաշտպանության պայմաններին, դասավանդման բովանդակությանը,

առարկայական կառուցվածքին և ուսումնական գործընթացի կազմակերպմանը, որոնք հանդիսանում են կրթական ծրագրի որակի ապահովման կարևոր բաղադրիչներ:

1. **Նշեք կրթական ծրագիրը**


   Առողջապահության կազմակերպում և կառավարում 25 **(100%)**

2. **Որքանո՞վ էին օբյեկտիվ հանձնաժողովները թեզի պաշտպանության ժամանակ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ արտահայտված ոչ



   օբյեկտիվ մոտեցում, 5-ը՝ խիստ օբյեկտիվ մոտեցում)


3. **Ինչպես կգնահատեք թեզի ղեկավարի աջակցությունը** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ արտահայտված ոչ օբյեկտիվ մոտեցում, 5-ը՝ խիստ օբյեկտիվ մոտեցում)



4. Ավարտական թեզի պաշտպանությանը նախապատրաստվելու ընթացքում


		Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Ա	Դուք ունեցել եք բավարար ժամանակ	88%	8%	4%
Բ	Դուք ունեցել եք բավարար գրականություն	88%	12%	0
Գ	Ընտրված թեման բխում էր ձեր հետաքրքրություններից	92%	4%	4%

5. **Թեզի պաշտպանության ընթացքում սենյակում ձևավորված միջավայրը որքանո՞վ էր նպաստում Ձեր ունեցած գիտելիքների և կարողությունների լիարժեք դրսևորմանը (**գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ Ձեզ զգում էիք կաշկանդված, 5-ը՝ ստեղծված էր անկաշկանդ միջավայր, որը լիովին նպաստում էր




Ձեր գիտելիքների և կարողությունների դրսևորմանը**)**

6. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



7. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



8. **Նշեք մինչև 3 առարկա, որոնց մասնաբաժնի հնարավոր մեծացումը, ըստ Ձեզ, կարող է նպաստել կրթական ծրագրի վերջնարդյունքների ավելի լիարժեք ձեռքբերմանը**

1. Որակական հետազոտության մեթոդներ
2. բուժհաստատությունների կառավարու, առողջապահական իրավունք
3. Տվյալների վիճակագրական վերլուծություն, Առողջապահության կազմակերպում
4. Համակարգերի համեմատական վերլուծություն, որակական հետազոտության մեթոդներ, բուժհաստատությունների կառավարում
5. Որակական մեթոդներ, բուժհաստատություններ, համեմատական համակարգեր
6. Որակական մեթոդներ, բուժհաստատության կառավարում
7. Որակական հետազոտոթյան մեթոդներ, բուժհաստատտությունների կառավարում, իրավունք
8. Բուժհաստատությունների կառավարում Որակական մեթոդներ
9. Բուժհաստատություններ, որակական մեթոդներ
10. Բուժհաստատությունների կառավարում, որակ
11. Վորականհետազոտություն, bujhastatutyunneri karavarum, elektivner

12. Բուժհաստատությունների կառավարում
13. Կենսավիճակագրություն
14. Որակական մեթոդներ, համակարգերի համեմատական վերլուծություն
15. Leaderahip, որակական մեթոդներ
16. Բուժհաստատքությունների կառավարում
17. Բուժհաստատությունների կառավարում
18. Մոր և Մանկան առողջություն, շրջակա միջավայրի հիգիենա
19. Որակական մեթոդներ
20. Վիճակագրություն
21. Բոլոր մեկ շաբաթանոց առարկաները
22. Բուժհաստատության կառավարում Որակական հետազոտության մեթոդներ
23. Համեմատական վերլուծություն Որակական մեթոդներ

9. **Նշեք մինչև 3 առարկա, որոնց մասնաբաժնի հնարավոր նվազեցումը, ըստ Ձեզ, կարող է իրականացվել առանց կրթական ծրագրի վերջնարդյունքների խաթարման**

1. Առողջապահության կազմակերպում
2. Կենսավիճակագրություն , ֆինանսներ, կազմակերպում
3. Ֆինանաս կազմակերպում, կազմակերպական վարքագիծ
4. Ֆինանսեր, կազմակերպում
5. Կենսավիճակագրություն , կազմակերպական վարքագիծ
6. կազմակերպում, մոնիթորինգ և ֆինանսներ
7. Կազմակերպում, Կազմակերպական վարքագիծ
8. Կենսավիճակագրություն, կազմակերպում
9. Ֆինանաս կազմակերպում, կազմակերպական վարքագիծ, կենսավիճակագրություն
10. Առողջապահության ֆինանսավորում և էկոնոմիկա

11. Իրավունք
12. Ֆինանսներ եւ էկոնոմըկա, կազմակերպական վարքագիծ
13. Կազմակերպական վարքագիծ
14. Ֆինանսներ եւ էկոնոմիկա
15. Առողջապահության կազմակերպում, ֆինանսներ և էկոնոմիկա
16. Երեք շաբաթանոց առարկաները
17. Ֆինանս, կազմակերպում
18. Կենսավիճակագրություն 2, ծրագրերի մոնիտորինգ, ֆինանաներ

10. Ըստ Ձեզ, կրթական ծրագիրն ավարտելուց հետո, որքանով եք տիրապետում ներքոնշյալ վերջնարդյունքներին (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ չեք տիրապետում, 5-ը՝ լիովին տիրապետում եք)

Վերջնարդյունք	**Գնահատական** (*միջինացված*)
1. Կիրառել համաճարակաբանական, վիճակագրական և վերլուծական մեթոդների լայն շրջանակ՝ գնահատելու բնակչության առողջական կարիքները, հետևելու հանրային առողջության միտումներին, ինչպես նաև գնահատելու առողջապահական համակարգերի ու ծառայությունների արդյունավետությունն ու ազդեցությունը, ներառյալ Հայաստանի պայմաններում:	4.28
2. Մշակել, իրականացնել և գնահատել հանրային առողջության ծրագրեր և առողջապահական միջամտություններ, հիմնված բնակչության կարիքների, համատեքստային ապացույցների և հանրային առողջության առաջնահերթությունների վրա՝ հաշվի առնելով ռեսուրսների ու ենթակառուցվածքների սահմանափակումները, որոնք բնորոշ են Հայաստանին և համանման միջավայրերին:	4.44
3. Քննադատական կերպով վերլուծել առողջապահական համակարգերը, կառավարումը, քաղաքականությունները և ֆինանսավորման մեխանիզմները, ներառյալ Հայաստանի առողջապահական բարեփոխումները և ազգային ծրագրերը, և առաջարկել ապացույցների վրա հիմնված լուծումներ՝ արդարության, արդյունավետության և մատչելիության բարելավման համար:	4.32
4. Ցուցաբերել առաջնորդություն, հաղորդակցման և ռազմավարական կառավարման հմտություններ, որոնք կիրառելի են միջմասնագիտական թիմերում և միջոլորտային համագործակցությունների շրջանակում՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային պրակտիկայում:	4.32
5. Արդյունավետ հաղորդակցել հանրային առողջության բարդ հարցերը տարբեր թիրախային լսարանների հետ, այդ թվում՝ քաղաքականություն մշակողների,	4.2

մասնագիտական համայնքի և հանրային շահառուների հետ՝ օգտագործելով համապատասխան հաղորդակցական միջոցներ և ձևաչափեր:	
6. Ինտեգրել բարոյագիտության, մարդու իրավունքների և սոցիալական արդարության սկզբունքները հանրային առողջության քաղաքականությունների վերլուծության, ծրագրային լուծումների մշակման և ծառայությունների իրականացման մեջ՝ կենտրոնանալով առողջական անհավասարությունների նվազեցման վրա Հայաստանում:	4.36
7. Իրականացնել անկախ հանրային առողջության հետազոտություն կամ կիրառական դաշտային ծրագիր, օգտագործելով քանակական, որակական կամ խառը մեթոդաբանություններ՝ պահպանելով հետազոտական էթիկայի և ազգային առաջնահերթությունների պահանջները:	4.36
8. Աշխատել միջոլորտային համագործակցության շրջանակում, դիմակայելու բարդ հանրային առողջության խնդիրներին, ներառյալ թվային առողջության գործիքների ինտեգրումը, համայնքային հիմնված մոտեցումները, հսկողության համակարգերը և համադրված արձագանքները զոոնոտիկ և բնապահպանական առողջական սպառնալիքներին:	4.16
9. Խթանել հանրային առողջապահական գրագիտությունը և նվազեցնել ապատեղեկատվությունը՝ կիրառելով թվային և միջանձնային հաղորդակցման ռազմավարություններ:	4.36
10. Քննադատական կերպով վերլուծել ազգային և գլոբալ առողջապահական մարտահրավերները, ներառյալ հետկոնֆլիկտային վերականգնումը, կլիմայական ռիսկերը և կադրային պակասը Հայաստանում, և ձևակերպել համատեքստին համապատասխանող, կայուն և գործնական լուծումներ:	4.2

11. Խնդրում ենք նշել ուսումնառության հետ կապված հիմնական խնդիրները և/կամ դրանց լուծմանն ուղղված Ձեր առաջարկները

1. Ավելացնել պրակտիկա
2. Շատ խիտ են դասերը
3. Կարծում եմ շատ պետք է ակտիվ պրակտիկան, երբ ուսանողները հնարավորություն կստանան լինել թե՛ առողջապահության նախարարությունում, թե՛ բժշկական հաստատություններում, որտեղ ներսից կծանոթանան մանագիտական գործունեությանը, եւ տեսական գիտելիքը կհարստացնեն իրենց իսկ փորձով (եթե ուսումնառությունը լիներ 2 տարի եւ վերջին կիսամյակը տրամադրվեր ակտիվ պրակտիկային վստահաբար ոլորտ կմտնեին արդեն իսկ որոշակի

փորձով մասնագետներ, որոնք թղթի գրվածից զատ հստակ գիտեն իրենց անելիքները գործնականում):

4. չունեմ
5. Progarm planning և մոնիտորինգը իրար մեջ նման բաներ կային, կառավարման հիմունքների և կառավարման մեջ նույնպես
6. Ավելացնել էլեկտիվ առարկաներ
7. Հավասարեցնել դասընթացների տևողությունը, ավելացնել պրակտիկա և ընտրովի դասընթացներ
8. Ցանկալի կլինի ունենալ պրակտիկա
9. Ավելացնել ընտրովի դասեր և պրակտիկա
10. Miacnel cragreri planavorum, irakanacumy monitoringi ev gnahatman het.
11. Ավելացնել պրակտիկա
12. Կային առարկաներ, օրինակ կենսավիճակագրությունը, որի համար կարելի էր նախատեսել երեք շաբաթանոց ժամաքանակ, իսկ օրինակ իրավունքը կարելի էր մեկ շաբաթ դարձնել, որոշ առարկաներ շատ նման էին իրար, ինչը ձանձրալի էր դարձնում դասապրոցեսը, կարելի էր դրանք ընդհանրապես հանել կամ գոնե վերանայել
13. Կան առարկաներ որոնց բովանդակությունը կրկնվում է
14. Ավելացնել ընտրովի դասընթացներ
15. Այցելություններ կազմակերպություններ
16. Վիճակագրություն առարկայի առավել գործնական վարում, ուսանողների քանակի նվազում, դասախոսների համբերատարություն
17. Ավեացնել այցելություններ կազմակերպություններ
18. Թվային առողջապահության վերաբերյալ առարկա ավելացրեք
19. Պրակտիկա

Ամփոփում

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ կրթական ծրագիրը հիմնականում ապահովում է բարձր մակարդակի մասնագիտական պատրաստվածություն՝ ձևավորելով հանրային առողջության ոլորտում անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Շրջանավարտների գնահատականները վկայում են վերջնարդյունքների բարձր մակարդակով ձեռքբերման մասին (միջին գնահատականները՝ 4.16–4.44 միջակայքում), ինչը խոսում է ծրագրի արդյունավետության և ուսումնական գործընթացի ընդհանուր դրական արդյունքների մասին

Միաժամանակ, հարցման արդյունքները վկայում են մի շարք համակարգային բարելավումների անհրաժեշտության մասին: Առավել հաճախ նշված խնդիրներից են գործնական բաղադրիչի անբավարարությունը, դասընթացների բովանդակության որոշակի կրկնությունները, ինչպես նաև առարկաների ժամաբաշխման ոչ հավասարակշռվածությունը: Շրջանավարտները կարևորում են պրակտիկայի ընդլայնումը, առողջապահական հաստատություններում և պետական կառույցներում գործնական փորձի ապահովումը, ինչպես նաև ընտրովի դասընթացների և նոր թեմաների (օրինակ՝ թվային առողջապահություն) ներառումը:

Ընդհանուր առմամբ, կրթական ծրագիրը համապատասխանում է մասնագիտական պահանջներին և ապահովում է շրջանավարտների բավարար պատրաստվածություն, սակայն դրա հետագա զարգացումը պետք է ուղղված լինի գործնական հմտությունների խորացմանը, ուսումնական բովանդակության օպտիմալացմանը և ուսանողակենտրոն մոտեցումների ուժեղացմանը: Այս բարելավումները կնպաստեն շրջանավարտների մրցունակության բարձրացմանը և նրանց ավելի արդյունավետ ներգրավմանը հանրային առողջության ոլորտում: